ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ

17.12.2013 11:12

ՀՀ Փաստաբանների պալատի ակումբը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ 2013 թվականի դեկտեմբերի 13-ին կազմակերպել էր քննարկում Ինքնաբացարկի ինստիտուտի վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ

1.Ինքնաբացարկի ինստիտուտի չգործելու մասին
Զեկուցող Փաստաբան Կարինե Բաղդասարյան
2.Ինքնաբացարկի ինստիտուտի իրավահամեմատական վերլուծություն
Գործող ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ և օրենքի նախագիծ Զեկուցող' Փաստաբան Մելանյա Առուստամյան:

ԽՆԴԻՐԸ

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀՀ-ՈՒՄ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Զեկուցողների կողմից ներկայացվեց, որ գործող օրենսդրությամբ թվարկված են ինքնաբացարկ հայտնելու հիմքերը,այդ հիմքերից մեկը որը նախատեսված է ՀՀ Դատական օրենսգրքի 91հոդվածի 1-ին մասի 1-ին կետով , ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 21 հոդվածի1-ին կետի համաձայն:

Զեկուցողների կողմից հարց ուղղվեց Հանրային պաշտպանի գրասենյակի Հանրային պաշտպաններին արդյոք իրենց գործունեության ընթացքում, որևէ ինքնաբացարկի միջնորդություն, որը արվել է կողմնակալության հիմքով բավարարվել է, թե ոչ: Հարցի պատասխանը բացասական էր:

Ակումբի մասնակիցները նշեցին, որ որևէ դատավոր երբևէ չի ընդունի, որ ինքը կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, պաշտպանի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ:
Բնականաբար, այստեղ գործում է սուբյեկտիվ գործոնը, հատկապես երբ դատավորը ինքը պետք է որոշի ինքը կանխակալ վերաբերմունք ունի թե ոչ, երբեք չի որոշի ,որ ինքը ունի այդ կանխակալ վերաբերմունքը:

Ստացվում է, որ այս ինստիտուտը չի գործում, ավելի ավելորդ ծանրաբեռնում է դատավարության

մասնակիցներին' բացարկ ներկայացնելու, դատավորների էլ' մերժման որոշում կայացնելու համար:

Դատավարության մասնակիցը, որի ներկայացուցիչը կամ պաշտպանն է հանդիսանում փաստաբանը, պահանջում է իր փաստաբանից, որ վերջինս ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնի, սակայն որքան էլ ջանք գոևրծադրի փաստաբանը, միևնույնն է դատարանը չի բավարարելու:

"ՄԻԵԴ-ն իր բազմաթիվ նշանակություն ունեցող վճիռներում անդրադառնալով դատավորի անաչառության ստուգման եղանակների հարցին, սահմանել է հետևյալ երկու չափանիշները. "Չնայած, որ անաչառությունը սովորաբար նշանակում է անաչառության կամ կողմնակալության բացակայություն, դրա բացակայությունը կամ առկայությունը կարող է ստուգվել տարբեր եղանակ-ներով: Այն հնարավոր է ստուգել դատավորի սուբյեկտիվ մոտեցումից, որն արտահայտվում է դատավորի համոզմունքով կոնկրետ գործի առթիվ և օբյեկտիվ տեսանկյունից, որն արտահայտվում է նրանով, թե կոնկրետ գործով կային արդյո՞ք բավարար երաշխիքներ՝ անաչառության վերաբերյալ որևիցե կասկածներ բացառելու ուղղությամբ":Ֆեյն ընդդեմ Ավստրիայի գործով եվրոպական դատարանը պարզաբանել է, որ "օբյեկտիվության թեստի շրջանակներում անհրաժեշտ է որոշել, թե դատավորի անձնական վարքագծից անկախ, գոյություն ունեն արդյո՞ք անհերքելի փաստեր, որոնք կարողանան կասկած հարուցել նրա անաչառության նկատմամբ: Այս առումով անգամ արտաքին ատրիբուտները կարող են որոշ նշանակություն ունենալ: Տվյալ դեպքում քարտեզին է դրված այն վստահությունը, որը ժողովրդավարական հասարակությունում պետք է դատարաններն առաջացնեն հանրության և ամենից առաջ քրեական գործերով մեղադրյալների մոտ: Սա նշանակում է, որ կոնկրետ դատավորի անաչառությունը պարզելիս մեղադրյալի տեսակետն ունի կարևոր, բայց ոչ որոշիչ դեր: Որոշիչն այն է, թե օբյեկտիվորեն որքանով կարող են այդ մտավախությունները արտահայտվել":

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 66 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն Դատավորը չի կարող մասնակցել վարույթին, եթե' 1) կանխակալ վերաբերմունք ունի վարույթին ներգրավված որևէ անձի նկատմամբ: Նույնը նախատեսված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փփոփոխուփյուն կատարելու մասին Օրենքի նախագծում/ 26 հոդվածի 1-ին մասի 1-ին կետ /:

Ակումբի մասնակիցները արձանագրեցին, որ պետք է նոր լուծում ներ տրվեն, այլապես այս ինստիտուտը չի գործում և Նախագծերով առաջարկվող կարգավորումները որևէ լուծում չեն տալիս խնդրին:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ

Կամ ՀՀ դատական օրենսգրքի 91հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը ընդհանապես հանել /
Կամ որոշել օբյեկտիվ չափորոշիչներ կանխակալ վերաբերմունքի վերաբերյալ:

Որոշվեց
1. Խնդիրը լայն քննարկման առարկա դարձնել

2. Քննարկման մասին տեղադրել պալատի կայք էջում և Սոցիալական ցանցերում և խնդրել առաջարկություններ ներկայացնել

Պալատի Խորհրդի անդամ'ակումբի աշխատանքները համակարգող

Մելանյա Առուստամյան

Նախորդ նորությունը: ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Հաջորդ նորությունը: ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏ

Առաջարկվող նորություններ

29.10.2013ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏԻ ՀՐԱՎԵՐ

22.11.2013ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26.11.2013ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

27.11.2013ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՏՈՒՄ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })